ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1

№ ԲՄԱՊՁԲ-21-20/1-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 21.04. 2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս. Մահակյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Ա. Ասրյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 25.03.2021թ. կնքված № ԲՄԱՊՁԲ-21-20/1-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.13 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագիրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **36 000 000 (երեսունվեց միլիոն) ՀՀ դրամ,** ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետին համապատասխան, եռամսյակներում առկա միջոցների հաշվին, բայց ոչ ուշ քան 10.12.2021թ.:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Դատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ԻԶ վարչությունը :

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Ռաֆ-Օջախ» ՍՊԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Նոր Արեշ 26փ., տ.83
ՀՀ ֆինանսների նախարարության	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 11500545523900
Հ/Հ 900011144079	ՀՎՀՀ 00456403
ՀՎՀՀ 02522157	Տնօրեն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	
Ս. ՄԱՀԱԿՅԱՆ	Ա. ԱՍՐՅԱՆ

Հավելված N 1
№ ԲՄԱՊՁԲ-21-20/1-1 գնման պայմանագրի
N 1 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	Չ/մ	Քանակ	Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումարը /ՀՀ դրամ/	Ապրանքների մատակարարումը ըստ եռամսյակների 2021թ.
						2-րդ եռամսյակ
1	Անվտանգության արգելապատնեշներ /Եզոգա/	հատ	2000	18 000	36 000 000	2000

Ծանոթություն՝ ապրանքները պետք է հանձնվեն ՀՀ ԶՈՒ ԻԶՎ կենտրոնական պահեստ, ք. Էջմիածին Իսիլե-Մուլինոյի 7 հասցեում և բեռնաթափվի մատակարարի միջոցով:

Հավելված N 2
№ ԲՄԱՊՁԲ-21-20/1-1 գնման պայմանագրի
N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկան	CPV-ի կոդը	*Նախատեսվում է ֆինանսավորել 2021թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ քան 10.12.2021թ., ընդ որում		
			2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	Անվտանգության արգելապատնեշներ /Եզոգա/	34921220/501	36000000	36000000	36000000

** Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ԱՍԱՏՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Ռաֆ-Օշախ» ՍՊԸ տնօրեն

Ա. ԱՄՐՅԱՆ